https://doi.org/10.46991/hc.2023.19.1.104

Soviet-Turkish Relations During the Cold War

Kristine Melkonyan
PhD in History, Chair of the History of Armenia's Neighboring Countries, YSU
https://orcid.org/0000-0003-3066-8178
chmelkonyan@ysu.am

Keywords: Cold War, Turkey, USSR, NATO, Soviet-Turkish relations, anti-Soviet policy, Cyprus crisis.

To recognize the nature of modern military-political events, it is necessary to study the processes that took place in the second half of the 20th century, since the Cold War and modern events have certain common features, the comparison and analysis of which can contribute to reasonable forecasts of political prospects. The study of Soviet-Turkish relations during the years of the Cold War is of particular importance, which not only allows us to understand the motivation for the foreign policy of the USSR and Turkey in the context of the formation of an international military-political confrontation, but also to consider the processes that influenced the nature of relations between the two countries and their development.

The article discusses the features and stages of development of Soviet-Turkish relations during the Cold War. The 60s and 70s of the last century are especially mentioned, presenting the international processes that contributed to the improvement of Soviet-Turkish relations in those years.

Սառը պատերազմյան տարիների խորհրդա-թուրքական փոխհարաբերությունների շուրջ

Քրիստինե Մելքոնյան
պ.գ.թ., ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ

Հիմնաբառեր՝ սառը պատերազմ, Թուրքիա, ԽՍՀՄ, ՆԱՏՕ, խորհրդա-թուրքական հարաբերություններ, հակախորհրդային քաղաքականություն, Կիպրոսի ճգնաժամ:

Աշխարհաքաղաքական արդի զարգացումների բնույթն ըմբռնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել XX դարի երկրորդ կեսին ընթացող գործընթացները, քանզի «սառը պատերազմը» և

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 104-112
Received: 24.01.2023
Revised: 07.03.2023
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

ներկայիս զարգացումներն ունեն որոշակի ընդհանրություններ, որոնց համեմատությունն ու վերլուծությունը կարող են նպաստել քաղաքական հեռանկարների վերաբերյալ հիմնավորված կանխատեսումներ կատարելուն: Հատկապես կարևոր է սառը պատերազմի տարիների խորհրդա-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությունը, ինչը ոչ միայն հնարավորություն է տալիս միջազգային ռազմաքաղաքական առճակատման ձևավորման համատեքստում հասկանալու ԽՍՀՄ-ի և Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարության ձևավորման և փոխակերպումների դրդապատճառները, այլև վերհանելու այն խորքային գործընթացները, որոնք ազդել են այդ տարիների երկու երկրների հարաբերությունների բնույթի և զարգացման վրա:

Հոդվածում փորձ է արվում դիտարկելու սառը պատերազմի տարիներին խորհրդա-թուրքական հարաբերությունների և զարգացման փուլերը առանձնահատկությունները: Հատկապես անդրադարձ է կատարվում անցյալ դարի 1960-1970-ականները՝ ներկայացնելով այն միջազգային գործընթացները, որոնք նպաստել են խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավմանը:

Советско-турецкие отношения в годы холодной войны

Кристине Мелконян
к.и.н., доцент кафедры истории сопредельных стран Армении ЕГУ

Ключевые слова: Холодная война, Турция, СССР, НАТО, советско-турецкие отношения, антисоветская политика, кипрский кризис.

Для распознания характера современных военно-политических событий, необходимо изучить процессы, происходившие во второй половине XX века, поскольку «холодная война» и современные события имеют определенные общие черты, сопоставление и анализ которых может способствовать обоснованным прогнозам политических перспектив. Изучение советско-турецких отношений в годы «холодной войны» имеет особое значение, что не только позволяет понять мотивацию внешнеполитического курса СССР и Турции в контексте формирования международного военно-политического противостояния, но и рассмотреть процессы, повлиявшие на характер отношений двух стран и их развитие.

В статье рассматриваются особенности и этапы развития советско-турецких отношений в годы холодной войны. Особо упоминаются 60-е и 70-е годы прошлого века, представляя международные процессы, способствовавшие улучшению советско-турецких отношений в те годы.

* * *

Ներածություն: Թուրքիան ու Ռուսաստանը ունեն բավականին բարդ հինգդարյա հարաբերությունների պատմություն: Երկու երկրների միջև հարաբերությունները տևական ժամանակ ուղեկցվել են պատերազմներով: Բախումները հիմնականում ընթանում էին Ղրիմի, Բալկանների, Կովկասի, Սևծովյան նեղուցների, ինչպես նաև Եվրոպայում քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար: Բայց միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ դա երկկողմ

համագործակցության պատմություն է, որը պայմանավորված է Ռուսաստանի և Թուրքիայի ինչպես աշխարհագրական դիրքով, այնպես էլ առևտրային շահերով, մշակութային և պատմական առանձնահատկություններով: Գտնվելով Եվրասիայի տարածքում՝ այս երկու պետությունները և՛ Արևմուտքի, և՛ Արևելքի մաս են կազմում:

Սառը պատերազմի տարիներին խորհրդա-թուրքական հարաբերությունների, հատկապես երկու երկրների միջև տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությունը չափազանց կարևոր և արդիական է: Դիտարկելով ռուս-թուրքական մերօրյա հարաբերությունները՝ կարող ենք գտնել նմանություններ սառը պատերազմի տարիների իրավիճակի հետ և տանել զուգահեռներ: Վկայելով, որ տնտեսական շահերը վեր են դասվում քաղաքական տարաձայնություններից և կարող են նպաստել տնտեսական կապերի զարգացմանը: Ներկա հոդվածի նպատակն է ներկայացնել սառը պատերազմի ժամանակահատվածում խորհրդա-թուրքական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները:

Նկատենք, որ խորհրդա-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությունը գիտական հետազոտության կայուն հիմքերի վրա է դրվել դեռևս XX դարում: Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները նախկինում իրենց բովանդակությամբ ու հարցադրումներով մեր իրականության մեջ լիարժեքորեն համակարգված ուսումնասիրության չեն ենթարկվել, թեև հետազոտվել և հրապարակվել են հարցին վերաբերող գիտական աշխատություններ ու հոդվածներ, որոնցում լուսաբանվել են թեմային առնչվող առանձին խնդիրներ:

Հետազոտությունը իրականացվել է խնդրո թեմայի վերաբերյալ թուրքերեն, հայերեն և ռուսերեն գիտական տարաբնույթ ուսումնասիրությունների և պարբերական մամուլից քաղած նյութերի հիման վրա՝ վերլուծական, համադրական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Սառը պատերազմյան տարիների խորհրդա-թուրքական փոխհարաբերությունների շուրջ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պաշտոնական Անկարան վերանայեց իր արտաքին քաղաքականությունը՝ սերտ հարաբերություններ հաստատելով Արևմտյան Եվրոպայի պետությունների և ԱՄՆ-ի հետ: Նկատենք, որ այդ ժամանակահատվածում Թուրքիան առանցքային դեր էր խաղում Արևմուտքի հակախորհրդային ծրագրերում՝ կատարելով «ամենակարևոր ռազմաբազայի գործառույթը», որը պետք է ակտիվորեն օգտագործվեր Խորհրդային Միության վրա հարձակվելու դեպքում: Հատկապես սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ և Թուրքիայի հարաբերություններում պահպանվում էր Երկրորդ աշխարհամարտից հետո հաստատված ստատուս քվոն:

1950-1960-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունն Արևմուտքի հետ հարաբերությունների սերտացումն էր, հատկապես ՆԱՏՕ-ի անդամակցումը, որի գլխավոր շարժառիթը խորհրդային սպառնալիքն էր, որն առաջ էր եկել Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո:

1945 թ. Մոսկվայի՝ Անկարային ներկայացրած տարածքային պահանջատիրության և Սևծովյան նեղուցների ռեժիմի փոփոխության հարցի բարձրացման հետ կապված՝ խորհրդա-

թուրքական հարաբերություններում արձանագրվեց լարվածություն: Թուրքիան, ի դեմս ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, ձեռք բերելով դաշնակիցներ, հնարավորություն ստացավ ԽՍՀՄ պահանջների հարցում լինելու անզիջում՝ չընդունելով նրա առաջարկները: Փոխարենը ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան Թուրքիայի տարածքում կառուցեցին իրենց ռազմական հանգրվանները և պարտավորվեցին պաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը [Մելքոնյան, 2013, 196]: Այլ կերպ ասած՝ թուրք-արևմտյան համագործակցությունը այդ տարիներին ընթանում էր «խորհրդային վտանգի» դեմ ընդհանուր և փոխշահավետ պայքարի դրոշի ներքո:

1950 թ. Թուրքիայում իշխանության եկած Ժողովրդավարական կուսակցությունը շարունակում և խորացնում էր հակախորհրդային քաղաքականությունը: Հատկապես Ա. Մենդերեսի կառավարության տարիներին Թուրքիայում սաստկացան խորհրդամետ կողմնորոշում ունեցող գործիչների նկատմամբ հալածանքները: Կոմունիստական գաղափարախոսություն քարոզելու մեղադրանքով փակվում էին թերթեր և ձերբակալվում մի շարք ձախակողմյան գործիչներ: Չնայած այն հանգամանքին, որ Ի. Ստալինի մահից հետո՝ 1953 թ. մարտի 30-ին, ԽՍՀՄ-ը պաշտոնապես հրաժարվում էր Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներից [К Советско-турецким отношениям, «Правда», 19.07.1953]: Սակայն պաշտոնական Անկարան սառն էր ընդունում խաղաղությանը միտված Մոսկվայի այդ քայլը: Հատկապես խորհրդային ղեկավարությունը այդ ժամանակահատվածում փորձեր էր ձեռնարկում Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Չնայած իրականացված քայլերին՝ 1948-1953 թթ. ԽՍՀՄ-ից Թուրքիա ապրանքների ներմուծման մասնաբաժինը կազմում էր ընդամենը հարյուրերորդական տոկոսը, իսկ 1960-ականների սկզբին այն հազիվ գերազանցում էր 1 %-ը [СССР и Турция, 1917-1979, 1981, 240]: Նույնանման իրավիճակ էր նաև թուրքական ապրանքների արտահանման դեպքում: Այսինքն՝1950-ական թթ. խորհրդա-թուրքական տնտեսական հարաբերություններում բարելավում այդպես էլ չգրանցվեց, քանի որ պաշտոնական Անկարան խորհրդա-թուրքական հարաբերությունները դիտարկում էր ոչ թե որպես երկկողմանի խնդիր, այլ ավելի լայն՝ ԽՍՀՄ-Արևմուտք առճակատման շրջանակում:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում որոշակի ջերմացում նկատվեց միայն 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո: Չնայած այն հանգամանքին, որ խորհրդային իշխանությունները 1960 թ. ակտիվ աշխատանք էին տանում խորհրդա-թուրքական հարաբերությունները բարելավման ուղղությամբ, սակայն 1961-1962 թթ. Կարիբյան ճգնաժամի պատճառով երկու երկրների միջև նոր լարվածություն գրանցվեց: Եվ միայն 1964 թ. Կիպրոսի հիմնախնդրի հետ կապված թուրք-ամերիկյան հարաբերություններում առաջ եկած ճգնաժամը նպաստավոր պայմաններ էր ստեղծում ԽՍՀՄ-Թուրքիա կապերի ջերմացման համար: Հիմնականում բարիդրացիական մթնոլորտ ստեղծեցին 1960-ական թթ. խորհրդային և թուրք պաշտոնյաների բարձր մակարդակի փոխադարձ այցերը, որոնց ընթացքում Անկարայի հիմնական նպատակն էր Մոսկվայից ստանալ երաշխիքներ Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանման վերաբերյալ: Հատկապես երկու երկրների համար շրջադարձային էր 1964 թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերին 6-ը պաշտոնական այցով Մոսկվայում գտնվող Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆ. Էրքինի հետ հանդիպումները [Türk Sovyet ticari ilişkileri geliştirilecek. Türk-Rus Bildirisi, «Milliyet», 7.11.1964]: Վերջիններիս ընթացքում երկու

կողմերը տարածեցին համատեղ հաղորդագրություն , որում ասվում էր. «ԽՍՀՄ-ը և Թուրքիան համաձայն են ամեն ճիգ գործադրել, որ երկու երկրների միջև ամրապնդվեն բարիդրացիական հարաբերություններ՝ հիմնված անկախության, տարածքային ամբողջականության և իրավունքների հավասարության հիման վրա» [Советско-турецкие переговоры, «Правда», 28.11.1964]: 1965 թ. հունվարի 4-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն. Պոդգորնին Անկարա կատարած պատասխան այցի ընթացքում ևս հաստատեց, որ «խորհրդա-թուրքական սահմանը կոչված է դառնալու բարեկամության ամրապնդման խորհրդանիշ» [Советско-турецкие переговоры в Анкаре, «Правда», 09.I.1965]: Խորհրդային կառավարության հայտարարությունները Թուրքիայի տարածքային ամբողջականության անքակտելության վերաբերյալ, ըստ էության, վկայում են, որ պաշտոնական Անկարան վախենում էր, որ հայկական տարածքների պահանջի հարցը կրկին օրակարգում կհայտնվի և Մոսկվայից երաշխիքներ էր կորզում: Իր հերթին ԽՍՀՄ-ը Թուրքիայից էլ երաշխիքներ էր պահանջում, որ վերջինս կարգելի ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին Թուրքիայի տարածքում ռազմաբազաներ կառուցել ԽՍՀՄ-ի դեմ: Թուրքական մամուլը տեղեկացնում էր, որ երկրի իշխանությունները հրաժարվել են բավարարել խորհրդային կողմի պահանջը [Bölükbaşır Sovyetlerle münasebette Hükümetin davranışını lenkid etti, «Milliyet», 11. 01. 1965]: Այնուհանդերձ, 1965 թ. հունվարի 14-ին պաշտոնական Անկարան հայտարարեց, որ չի մասնակցելու գարնանը նախատեսված ՆԱՏՕ-ի զինավարժություններին [Kuzey Atlantik Antlaşması ve Türkiye, «Milliyet», 15. 01. 1965]:

1965 թ. ողջ ընթացքում ԽՍՀՄ-ը շարունակում էր Թուրքիային սիրաշահելու քաղաքականությունը: Այդ մասին են վկայում մայիսի 18-ին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Ա. Գրոմիկոյի Անկարա կատարած պաշտոնական այցի ընթացքում արած հայտարարությունները: Նա խորհուրդ է տալիս հետևել «Աթաթուրքի և Լենինի օրինակին», նույնիսկ առաջարկում էր վերազծել խորհրդա-թուրքական սահմանը [Визит министра иностранных дел СССР А. Громыко в Турцию, «Правда», 23. 05.1965]: Նույն թվականի օգոստոսի 9-16-ը պատասխան այցով Խորհրդային Միությունում գտնվող Թուրքիայի վարչապետ Ալի Սուաթ Հայրի Ուրգյուփլուն մեկ անգամ էլ «ստիպեց» Մոսկվայի իշխանություններին հայտարարել, որ «ճանաչում են Թուրքիայի տարածքային ամբողջականությունը» [Визит премьер-министра Турции в СССР. «Правда», 17.08.1965]:

Թուրք պաշտոնյան հայտարարեց. «Վստահ եմ՝ իրատեսական և միանգամայն հնարավոր է Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև զարգացնել առևտրատնտեսական հարաբերությունները: Կարծում եմ, որ այդ հարաբերությունների զարգացումը մեծ օգուտ կբերի երկու երկրների տնտեսությանը և կամրապնդի մեր միջև համագործակցությունն ու բարեկամությունը» [Ürgüplü: Ruslar bir baraj ile 9 fabrika kuracak, «Milliyet», 20.08.1965]: Ավելին՝ այս այցից հետո երկու երկրները մտան տնտեսական հարաբերությունների զարգացման ակտիվ փուլ, որը շարունակվեց նաև 1965 թ. իշխանության եկած «Արդարություն» կուսակցության կառավարման տարիներին: Հատկապես ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ա. Կոսիգինի՝ 1966 թ. դեկտեմբերին Թուրքիա պաշտոնական այցից հետո խորհրդային կառավարությունը ստանձնեց այդ երկրի տարածքում մի շարք արդյունաբերական ծրագրերի իրականացումը: Իսկ մեկ տարի անց՝ 1967 թ. մարտի 25-ին, կնքվեց

տնտեսական և տեխնիկական համագործակցության միջկառավարական պայմանագիր, որի համաձայն՝ հետագա տարիներին ԽՍՀՄ-ը Թուրքիայի տարածքում կառուցեց արդյունաբերական մի շարք կարևոր ձեռնարկություններ՝ Իսքենդերունի մետալուրգիական, Ալիաղի նավթամշակման, Արդվինի փայտամշակման գործարանները և այլն [Altan, 1986, 130]: Այս արդյունաբերական ծրագրերի շնորհիվ Թուրքիայի տնտեսությունը դարձավ զգալիորեն ինքնաբավ՝ կրճատելով արդյունաբերական հումքի ներմուծման ծավալները: Այսպիսով՝ արձանագրենք, որ Թուրքիան դարձավ սոցիալիստական ճամբարից դուրս միակ երկիրը, որտեղ Խորհրդային Միությունը կատարեց ամենամեծ ներդրումները:

Մյուս կարևոր հարցը սահմանների կարգավորման հարցը էր, որը օրակարգային էր այդ տարիներին, և 1967 թ. փետրվարին Թուրքիայի կառավարությունը, հիմք ընդունելով, ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Ա. Գրոմիկոյի՝ երկու երկրների միջև սահմանների վերագծման մասին 1965 թ. մայիսի 18-ի առաջարկը, համաձայնեց կնքել խորհրդա-թուրքական արձանագրություն: Այն ստորագրվեց փետրվարի 28-ին Անկարայում: Համատեղ հաղորդագրության մեջ նշվում էր, որ 1921 թ. պայմանագրով գծված խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանանշումը անհրաժեշտություն էր դարձել սահմանային գետերի հուների փոփոխության, ինչպես նաև սահմանանշման փաստաթղթերի պայմանների անհամապատասխանության պատճառով [Türk Dış Politikası - Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Cilt I (1919-1980), 2001, 864): Մինչդեռ իրականում թուրքական կողմը այս կերպ փորձում էր հասնել Կարսի պայմանագրի և սահմանների անփոփոխելիության վերաճանաչմանը: Ավելին՝ հավաքական Արևմուտքը, հասկանալով Թուրքիայի անհանգստության պատճառը, կրկին Թուրքիային սիրաշահելու նպատակով նոր խոստումներ էր տալիս վերջինիս: Ապրիլին էլ ստամբուլահայ մամուլը, հիմնվելով թուրքական թերթերի վրա, հաղորդեց, որ Թուրքիան ԽՍՀՄ հավանական հարձակումից պաշտպանվելու համար ՆԱՏՕ-ին առաջարկել է «աթոմական ականերու դաշտեր հաստատուին թուրք և ռուս սահմանին վրայ՝ նկատելով, որ Թուրքիա հինգ զորաբաժին ունի հոն» [«Մարմարա», 21.04.1967]: Դրանով իսկ փորձում էր արևմտյան դաշնակիցներին հավատացնել, որ անհանգստացած էր իր տարածքային ամբողջականության հարցում, ամենևին չէր վստահում ԽՍՀՄ-ին: Ավելին՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ է վերանայելուր վերջին տարիներին երկու երկրների միջև հաստատված ջերմ հարաբերությունները: Թուրքական կողմի հակասական այս քայլերը խոսում էին այն մասին, որ, ինչպես միշտ, պաշտոնական Անկարան փոփոխական էր իր արտաքին քաղաքականության մեջ:

Ինչևէ, 1967 թ. սեպտեմբերին Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը պաշտոնական այց կատարեց Մոսկվա ու Բաքու՝ արժանանալով ջերմ ընդունելության: Հետագայում՝ 1968-1969 թթ.՝ խորհրդա-թուրքական բարձր մակարդակով հանդիպումների ժամանակ, հիմնականում քննարկվում էր սահմանի վերագծման հարցը: Թուրքական մամուլն էլ այդ առիթներով տարաբնույթ լուրեր էր տարածում, որոնք լարում էին իրավիճակը երկրում: Ավելին՝ թուրքական կողմը բացահայտ ճնշումների և պարտադրանքի արդյունքում 1973 թ. դեկտեմբերի 29-ին Անկարայում Թուրքիայի ԱԳՆ շենքում անցկացվեց խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման մասին փաստաթղթերի ստորագրման և դրա վերաբերյալ համատեղ Կոմյունիկեի ընդունման հանդիսավոր արարողությունը [Türk Dış Politikası - Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, 2001, 872]:

1970 թվականից ի վեր Արևմուտքը որոշակի քայլեր ձեռնարկեց կանխելու խորհրդա-թուրքական մերձեցումը: Սակայն իրավիճակը որոշակիորեն փոփոխվեց 1974 թ. Կիպրոսի ճգնաժամի հետևանքով: Եվ եթե ԽՍՀՄ-ը ձեռնպահ մնաց թուրքական ռազմական գործողությունը դատապարտելուց, ապա ԱՄՆ-ն որոշակի պատժամիջոցներ կիրառեց Թուրքիայի նկատմամբ, ինչն էլ հանգեցրեց Անկարա-Վաշինգտոն ճգնաժամին և խորհրդա-թուրքական տնտեսական հարաբերությունների էլ ավելի բարելավմանը: Տնտեսական կապերից բացի՝ փորձեր կատարվեցին քաղաքական հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: 1978 թվականին երկու երկրների միջև ստորագրվեց երկու փաստաթուղթ: Առաջինը վերաբերում էր խորհրդա-թուրքական տնտեսական հարաբերությունների զարգացմանը, երկրորդը քաղաքական համաձայնագիր էր՝ համատեղ համագործակցության և բարիդրացիության սկզբունքների վերաբերյալ [Hale, 2003, 326]: Խորհրդային իշխանությունները շահագրգռված էին շարունակել համագործակցությունը նաև ռազմական ոլորտում: 1978 թ. և 1979 թ. նախատեսված էին խորհրդային բարձրաստիճան զինվորականության պաշտոնական այցերը Թուրքիա, ինչպես նաև սպասվում էին թուրք զինվորականների պատասխան այցերը: Սակայն միջազգային իրավիճակի սրման, ինչպես նաև 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման պատճառներով ձեռք բերված պայմանավորվածությունները մասամբ իրականացվեցին:

Այսպիսով՝ 1960-1970-ական թթ. Թուրքիան իրականացնում էր բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ բարելավելով խորհրդա-թուրքական տնտեսական հարաբերություններն ու միաժամանակ հավատարիմ մնալով արևմտյան պետություններին և ՆԱՏՕ-ին:

1980-ական թթ. համաշխարհային ասպարեզում տեղի ունեցող զարգացումները կարևոր նշանակություն ունեցան Թուրքիայի նոր արտաքին քաղաքական տեսլականի մշակման և իրականացման հարցում: Հատկապես մշակվեց ավանդական արևմտականացման քաղաքականությունից տարբերվող հայեցակարգ: Ինչ վերաբերում է 1980-ական թթ. խորհրդա-թուրքական հարաբերություններին, ապա այն կարելի է բաժանել հիմնականում երկու փուլի՝ 1979-1982 թթ. և 1982-1991 թթ.:

Առաջին փուլն ընդգրկում էր այն ժամանակաշրջանը, երբ ԽՍՀՄ ռազմական ուժերը ներխուժել էին Աֆղանստան, այդ թվում նաև կտրուկ վատթարացել էին հարաբերություններն Արևմուտքի ու Արևելքի միջև: Բնական է, որ տեղի ունեցող զարգացումներն անդրադարձ ունեցան խորհրդա-թուրքական հարաբերությունների վրա՝ թևակոխելով լճացման փուլ: Թուրքիան ստիպված էր աստիճանաբար հրաժարվել բազմավեկտոր արտաքին քաղաքականությունից: Վերջինս հանդիսանալով ԱՄՆ դաշնակիցը՝ պարտավոր էր որոշակի ձևով արտահայտել իր դիրքորոշումը:

Անկարայի կառավարությունը որոշում կայացրեց դատապարտել ԽՍՀՄ ռազմական ներխուժումը Աֆղանստան և պաշտպանել արևմտյան դաշնակիցներին: Ավելին՝ 1980 թ. պաշտոնական Անկարան, մի կողմից, գիտակցում էր, որ խորհրդային վտանգի սպառնալիքի առջև կանգնած արևմտյան երկրներն ունեին Թուրքիայի ծառայության կարիքը, որը հնարավորություն էր տալիս նրանց մեծացնելու ազդեցությունը միջազգային ասպարեզում: Մյուս կողմից Թուրքիան

վարում էր զգուշավոր քաղաքականություն՝ հրաժարվելով ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի՝ ընդդեմ ԽՍՀՄ-ի պատժամիջոցներ կիրառելու պահանջին:

Խորհրդային կառավարությունն էլ իր հերթին ամեն կերպ փորձում էր սիրաշահել Թուրքիային: 1981 թ. ԽՍՀՄ-ը, Մոսկվայի պայմանագրի 60-րդ հոբելյանի հետ կապված, շնորհավորեց Անկարայի կառավարությանը՝ մեկ անգամ էլ հաստատելով, որ ճանաչում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը [СССР и Турция, 1917-1979, 1981, 240]:

1982-1991 թթ. խորհրդա-թուրքական հարաբերություններում ջերմացում էր նկատվում: Այն կարելի է դիտարկել որպես այս ժամանակաշրջանի երկրորդ փուլը, որ սկիզբը համարվում էր խորհրդային առաջնորդ Լ. Բրեժնևի մահը և շարունակվում մինչև ԽՍՀՄ փլուզումը: Այդ ընթացքում խորհրդա-թուրքական հարաբերություններում արտացոլվել է միջազգայինի ընդհանուր իրավիճակը: Այսինքն՝ երկու երկրների կապերի բարելավման վրա ազդել էին ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի գլխավորած երկու դաշինքում ընդգրկված երկրների միջև ձևավորվող նոր հարաբերությունները:

Նոր թափով սկսեցին զարգանալ խորհրդա-թուրքական տնտեսական կապերը: 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին այդ հարաբերությունների ակտիվացումն իր վավերացումը ստացավ 1991 թ. մարտին Թուրքիայի նախագահ Թ. Օզալի Մոսկվա կատարած այցի ընթացքում ստորագրված խորհրդաթուրքական պայմանագրում [Кубрин, 2010, 47]: Մինչ այդ՝ 1989 թ. Հուլիսին, Թուրքիայի ֆինանսների նախարար Է. Բակդեմիրելին Մոսկվայում ունեցած հանդիպումներից հետո այցելեց Բաքու՝ տնտեսական կապեր հաստատելու նպատակով [Кубрин, 2010, 35], ինչը վկայում էր, որ այդ տարիներին Թուրքիան արդեն սկսել էր արտաքին ակտիվ քաղաքականություն իրականացնել ԽՍՀՄ-ի թյուրքալեզու հանրապետություններում: Այսինքն՝ ԽՍՀՄ թուլացումն ու անկումը Թուրքիայի համար գայթակղիչ հնարավորություններ բացեցին առևտրատնտեսական շահավետ կապերի հաստատման և դրանց համատեքստում հավակնոտ արտաքին քաղաքական ծրագրերի իրագործման առումով:

Եզրակացություն: Այսպիսով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային ասպարեզում տեղի ունեցավ աշխարհի առաջատար խաղացողների շահերի սուր բախում: Գլխավոր դաշնակից պետությունները ոչ միայն հայտնվեցին տարբեր ճակատներում, այլև դարձան հակառակորդներ Սառը պատերազմում: Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի հետ սերտ հարաբերություններ հաստատած Թուրքիան 1945 թվականից մինչև 1960-ական թվականների սկիզբը սառեցրեց հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Երկու երկրների միջև ջերմացում նկատվեց՝ միայն 1964 թվականից սկսած:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունում տեղի ունեցած այս փոխակերպումը հիմնված էր պրագմատիզմի վրա: Կիպրոսի ճգնաժամում աջակցություն հայցելով ԽՍՀՄ-ից՝ թույլատրում է վերջինիս Թուրքիայի տարածքում արդյունաբերական մի շարք խոշորածավալ նախագծերի իրականացումը: Խորհրդա-թուրքական տնտեսական համագործակցության արդյունքում Թուրքիան սոցիալիստական բլոկից դուրս միակ երկիրն էր, որտեղ Խորհրդային Միությունը կատարեց ամենամեծ ներդրումները: Այդ արդյունաբերական ծրագրերի շնորհիվ Թուրքիայի տնտեսությունը դարձավ բավարար ինքնուրույն՝ կրճատելով Արևմուտքից արդյունաբերական հումքի ծավալները:

ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների հետաքրքրությունների շրջանակում էր նաև Կարսի պայմանագրի և երկու երկրների սահմանի անփոփոխելության վերահաստատման հարցը, որը թուրքական կողմի ցանկությամբ օրակարգ էր մտնում: Վերջինս հետապնդում էր պատմաքաղաքական ենթատեքստ: Ի վերջո սահմանի վերասահմանագծման փաստաթուղթը ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրվեց 1973 թ.՝ այդ կերպ մեկ անգամ էլ հաստատելով երկու երկրների սահմանների անձեռնմխելիությունը:

Սառը պատերազմի տարիներին երկու երկրների հարաբերություններում բարելավում այդպես էլ չգրանցվեց, այլ առկա էր ժամանակավոր զինադադարի դրոշմը, որը վաղ թե ուշ պետք է վերածվեր կոշտ դիմակայության փուլի: Կտրուկ փոփոխություններ տեղի ունեցան միայն Խորհրդային Միության փլուզումից հետո: Չնայած մերօրյա ռուս-թուրքական հարաբերություններում աշխարհաքաղաքական մրցակցությունը պահպանվում է, սակայն ինչպես XX դարի երկրորդ կեսին, այնպես էլ ներկայումս այն կառուցվում է պրագմատիզմի և իրատեսական քաղաքականության հիման վրա:

Գրականության ցանկ

«Մարմարա», 21.04.1967.

Մելքոնյան Ք. 2013, ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947թթ.), Երևան, 249 էջ:

К Советско-турецким отношениям, «Правда», 19.07.1953.

Советско-турецкие переговоры, «Правда», 28.11.1964.

Советско-турецкие переговоры в Анкаре, «Правда», 09.01.1965.

Визит министра иностранных дел СССР А. Громыко в Турцию, «Правда», 23. 05.1965.

Визит премьер-министра Турции в СССР. «Правда», 17.08.1965.

СССР и Турция 1917-1979 1981, М., Наука, 320 с.

Чуфрин Г. 2010, Россия в Центральной Азии, Алматы: КИСИ, 220 с.

Altan M. 1986, Süperler ve Türkiye, İstanbul, Afa Yayıncılık, 238 s.

Türk Sovyet ticari ilişkileri geliştirilecek. Türk-Rus Bildirisi, «Milliyet», 7.11.1964.

Bölükbaşır Sovyetlerle münasebette Hükümetin davranışını lenkid etti, «Milliyet», 11. 01. 1965.

Kuzey Atlantik Antlaşması ve Türkiye, «Milliyet», 15.01.1965.

Ürgüplü: Ruslar bir baraj ile 9 fabrika kuracak, «Milliyet», 20.08.1965.

Türk Dış Politikası - Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler 2001, Cilt I (1919-1980), Baskın Oran (ed.), İstanbul, İletişim Yayınları, 900 s.